

...: Որ եւ արար իսկ: Սկսեալ քարոզելով ըստ հրամանի եւ աւանդելոյ Տեառն իւրոյ եկն եհաս ի գաւառս Գողթան, ի աստուածաշէն եւ աստուածաբնակ գիւղաքաղաքս յԱգուլիս: Ընդ որս եւ ընդ առաջ եղեն նմա արք եւ կանայք, ծերք եւ տղայք, երիտասարդք եւ մանկունք ըստընդեայք ըստ Տեառն. եւ տարեալ յօթեցին յեկեղեցին Քրիստափորի որոյ յանունն շինեալ կայ: Եւ արարեալ ընդունելութիւն ոչ սակաւ, այլ իբրեւ յԱստուծոյ առաքելոյ. զի աստուածաբանական տրամաբանելն զամենեսեան զարմացոյց հանդերձ զօրօքն երկնաւորօք. եւ ոչ թէ ըստ Արիստոտելի ճեմականաւն միայն շատանայր, այլ եւ ի տրամաբանին զարտասուսն իբրեւ յառուհեղուին: Զայս տեսեալ ժողովրդոցն ամենից՝ անուանեցին զնա Կայծակ. եւ ըստ Յոհաննու՝ Ապաշխարութեան վարդապետ. եւ ամենեքեան որք գային առ նա խոստովանութեան յաղաքաւ՝ զամենեսեան ապաշխարութեան փութացուցանէր. եւ ինքնին արտասուովք լուանայր զմեղս նոցա...: Եւ քանզի զայսոսիկ տեսեալ այլ ոչ եւս կամեցան մեկնիլ սմա յայսմ վիճակէ, այլ գնացեալ առ հայրապետն մեր ինդրեցին ի նմանէ տալ առաջնորդութիւն եւ հովութիւն նոցա: Եւ ասեն ոմանք եթէ ինքնին տէր սորա յառաջագոյն խոստացեալ լինել ուխտիւք զսա առաքել յայսմ